

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
հունիսի 11 -ի N 954 - Լ որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ
ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Պարենային ապահովումը և սննդամթերքի անվտանգությունը ռազմավարական նշանակություն ունեցող հիմնախնդիր է և կարևորվում է ոչ միայն սոցիալատնտեսական տեսանկյունից, այլ նաև մարդկանց առողջության ապահովման առումով: Առևտրի գլոբալիզացիայի պայմաններում սննդամթերքի արտադրությունն իրականացվում է «Ֆերմայից՝ պատառաքաղ» համակարգի սկզբունքներով, որոնցում կարևորվում են կենդանիների համարակալման և հաշվառման գործընթացները:

2. Արտադրողների համար այն նախատեսում է վերջնական մթերքի անվտանգության ամբողջական պատասխանատվության ապահովում՝ հետազոտելիության երաշխավորմամբ: Մինչդեռ առանց կենդանիների համարակալման և գրանցման հնարավոր չէ ապահովել հետազոտելիության սկզբունքով համապատասխան հսկողությունը:

3. Կարևորելով «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածներով սահմալված դրույթների կիրարկման ապահովումը, ինչպես նաև հաշվի առնելով սննդամթերքի անվտանգության, դրա որակի վերահսկման և ազգաբնակչությանը բարորակ մթերք մատակարարելու խնդիրները՝ ներկայումս խիստ հրամայական է դարձել գյուղատնտեսական կենդանիների համատարած համարակալման և հաշվառման, ինչպես նաև կենտրոնացված տվյալների բազայի ձևավորումը:

4. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման հայեցակարգի մշակումն ընդգրկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-N որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների» ցանկում:

5. Միաժամանակ խոշոր եղջերավոր կենդանիների (այսուհետ՝ ԽԵԿ) համարակալման և հաշվառման համակարգը (այսուհետ՝ համակարգ) կարող է խիստ վերահսկողություն սահմանել այնպիսի կարևոր գործընթացներում, ինչպիսիք են՝ մարդկանց և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների հայտնաբերումը և կանխարգելումը, կենդանիների վերարտադրության հետազոտելիության, կենդանիների և կենդանական ծագման մթերքի հավաստագրումը և փաստաթղթավորումը, կենդանիների և կենդանական ծագման մթերքի ներկրումը և արտահանումը:

6. Համակարգի ներդրումը կարող է կարևոր գործիք հանդիսանալ անասնաբուժական արտադրանքի կանխատեսման ճշգրտության բարձրացման, կենդանիների տեղաշարժի վերահսկման, թաքնված գլխաքանակի բացահայտման, ապահովագրա-

կան մեխանիզմների մշակման համար: Այն կարող է բարձրացնել նաև հանրապետությունում հակասանահամաճարակային կայուն վիճակի ապահովմանը միտված պետական օժանդակության ծրագրերի մշակման և միջոցառումների անցկացման արդյունավետությունը:

7. Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականին անասնաբուծությունից ստացվել է 442.4 մլրդ դրամի համախառն արտադրանք, որից ավելի քան 235 մլրդ դրամը բաժին է ընկնում տավարաբուծությունից ստացված արտադրանքին: Սակայն ներկայումս հանրապետությունում անասնազվխաքանակի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը հրապարակում է Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն (այսուհետ՝ ՀՀ ՎԿ): Այն դեպքում, որ գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառումն իրականացվում է ընդամենը տարին մեկ անգամ, արդյունքում տարեսկզբին հաշվառված և տարվա ընթացքում փաստացի (շրջանառու) գլխաքանակի միջև ի հայտ են գալիս անհամապատասխանություններ:

8. Հաշվի առնելով, որ մեր հանրապետությունում անասնաբուծությունից ստացվող համախառն արտադրանքի ավելի քան 85 տոկոսը սննդամթերք է (միս, կաթ), որի զգալի մասը ապահովում է տավարաբուծությունը, ապա առկա ԽԵԿ-ի գլխաքանակի վերաբերյալ ստույգ տեղեկատվության տիրապետումը և կենդանիների տեղաշարժի նկատմամբ հսկողության սահմանումս ամենաառանցքային գործոնն է կենդանական ծագման սննդամթերքի հետագծելիության ապահովման գործընթացում և որին կարելի է հասնել համակարգի գործարկման միջոցով:

I. ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

9. Հայաստանի Հանրապետության կենդանիների համարակալմանը ներկայացվող պահանջները կարգավորված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 1315-Ն **որոշմամբ**:

10. **Ներկայումս** հանրապետությունում համարակալված և հաշվառված են միայն Հայաստանի Հանրապետություն ներկրված տոհմային կենդանիները (տոհմային հավաստագիր ունեցող), ինչպես նաև արհեստական սերմնավորման միջոցով կամ տոհմային արտադրողի օգտագործմամբ դրանցից ստացված սերունդը: Այն դեպքում, որ համաձայն ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակված տվյալների՝ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում հաշվառվել է ընդհանուր առմամբ 579.3 հազար գլուխ ԽԵԿ, այդ թվում՝ շուրջ 251.7 հազար գլուխ կով, որոնց 99 տոկոսը կենտրոնացված է բնակչության (ֆիզիկական անձի կարգավիճակ ունեցող) տնտեսություններում (Աղյուսակ 1):

**Հայաստանի Հանրապետությունում հաշվառված ԽԵԿ-ի և հանրապետություն
ներկրված տոհմային ԽԵԿ-ի գլխաքանակն ըստ տարիների**
(ՀՀ ՎԿ, ՀՀ ԿԵ ՊԵԿ, ՀՀ ՍԱՏՍ)

Տեսակը	Չափի միավոր	Տարին				
		2016	2017	2018	2019	2020
Ընդամենը ԽԵԿ	1000 գլուխ	701.5	655.8	590.6	571.9	579.3
այդ թվում՝ կովեր		318.6	296.0	266.8	254.0	251.7
Տոհմային ԽԵԿ	գլուխ	451	439	214	210*	-

* 2019 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ

11. Հարկ է նշել, որ 2012 թվականին Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում իրականացվել է ԽԵԿ համարակալման, գրանցման և անձնագրավորման փորձնական ծրագիր (Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի N895-Ա որոշում), որի շրջանակներում մշակվել է «ԱՆԻ ՊԱՍ» էլեկտրոնային տեղեկատվական համակարգը (այսուհետ՝ «ԱՆԻ ՊԱՍ»), որի միջոցով հնարավոր է մուտքագրել և վերլուծել կենդանու վերաբերյալ տեղեկությունը (անասնատեր, կենդանու անհատական համար, հաշվառման վայր, անասնաբուժական միջոցառումներ, տեղաշարժ և այլն) և պահպանել այն: Սակայն պայմանավորված գյուղատնտեսական կենդանիների համատարած համարակալման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների բացակայությամբ՝ «ԱՆԻ ՊԱՍ»-ը ներկայումս չի գործարկվում:

12. Բացի այդ, 2014 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության մարտի 13-ի նիստի N10 արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել «**Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման ծրագրին ու ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին**», որն իրականացվել է միայն «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի» (այսուհետ՝ պատվաստման ծրագիր) շրջանակներում անասնաբույժների հետ քաղաքացիաիրավական աշխատանքային պայմանագրերի կնքման մասով («Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն):

13. Ելնելով պարենային անվտանգության ապահովման ողջ արժեզրթայում որակյալ և անվտանգ կենդանական ծագման սննդամթերքի (հումքի) արտադրության գործընթացի նկատմամբ սահմանված չափանիշների և պայմանների վերահսկման մակարդակի բարձրացման առաջնահերթություններից՝ անհրաժեշտ է հանրապետությունում ներդնել գյուղատնտեսական կենդանիների, մասնավորապես՝ ԽԵԿ-ի նույնականացման համակարգ:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

14. Հայաստանի Հանրապետությունում տավարաբուծությունից ստացվող արտադրանքը կազմում է անասնաբուծական համախառն արտադրանքի ավելի քան 60 տոկոսը՝ համարվելով անասնաբուծության ոլորտում ամենաբարձր հաշվեկշիռ ունեցող ճյուղը (Աղյուսակ 2): Սակայն ԽԵԿ-ի գլխաքանակի ապակենտրոնացվածությունը, կենդանիների գրեթե չվերահսկվող տեղաշարժը, կաթի մթերման կայանների և համապետական սպանդանոցային մորթի բացակայությունը լուրջ մարտահրավեր են կայուն հակասանասահամաճարակային իրավիճակի ապահովման և սննդամթերքի անվտանգության վերահսկողության համար:

15. Համակարգի ներդրման և գործարկման բացակայությունը բացասաբար է անդրադառնում տոհմասելեկցիոն համակարգված աշխատանքների կազմակերպման և հանրապետության նախիրներում արտադրատնտեսական բարձր ցուցանիշներով օժտված կենդանիների տեսակարար կշռի ավելացման վրա, մասնավորապես՝ ԽԵԿ ցեղերի (ցեղայնության), տոհմային կենդանիների գլխաքանակի ավելացման, ինչպես նաև արհեստական սերմնավորման պետական օժանդակության համապատասխան ծրագրերի մշակման և (կամ) իրականացման համար անհրաժեշտ ելակետային տվյալների անհամապատասխանության և այդ նպատակով ակնկալվող ֆինանսական միջոցների հաշվարկի անճշտության առումով:

Աղյուսակ 2

2019 թվականին Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծական արտադրանքի (միս, կաթ) կառուցվածքը (ՀՀ ՎԿ)

Արտադրանքը	Չափի միավորը	Արտադրության ծավալը	Արտադրանքի արժեքը*, մլրդ դրամ
Միս (սպանդանոցային զանգվածով)	1000 տոննա	108. 2	284. 2
որից՝ տավարի		68. 8	187. 1
ոչխարի և այծի		10. 8	29. 9
խոզի		16. 3	44. 4
թռչնի		12. 3	23. 0
Կաթ		697.7	106. 1
Ընդամենը՝		-	390. 5

* Գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված արտադրանքի միջին գներ

16. Բացի այդ, համապետական պարտադիր սպանդանոցային մորթի անցման պարագայում այն կծառայի որպես հսկողական գործիք, որի միջոցով հնարավոր կլինի

հանրապետությունում կազմակերպել արդյունավետ պայքար, ինչպես կենդանիների, այնպես էլ՝ մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների դեմ (բրուցելոզ, սիբիրախտ, դաբաղ և այլն):

17. Համընդհանուր հայտնի է, որ գյուղատնտեսությունը համարվում է բարձր ռիսկային ոլորտ, ուստի համակարգի կիրառումը նախադրյալներ կստեղծի հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների ապահովագրության ինստիտուտի ստեղծմանն ու կայացմանը՝ լրացուցիչ խթան հանդիսանալով անասնապահության զարգացման համար:

18. Պայմանավորված վերոգրյալով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գյուղատնտեսական կենդանիների համարակալումը, հաշվառումը և տեղեկատվական համակարգի մշակումը սահմանել է առաջնահերթություն, որն ամրագրվել է Հայաստանի Հանրապետության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության 75-րդ կետում:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

19. Ծրագրի նպատակն է պետական պատվերի շրջանակներում հանրապետությունում ներդնել և գործարկել ԽԵԿ-ի համատարած համարակալման և հաշվառման համակարգ, որը լինելով հանրապետությունում առկա ԽԵԿ-ի գլխաքանակի, տեղաբաշխվածության և շարժի, սեռահասակային կազմի, ցեղայնության, դրանց նկատմամբ իրականացված անասնաբուժական պարտադիր միջոցառումների վերաբերյալ տեղեկատվական հարթակ՝ հնարավորություն կընձեռի զգալիորեն բարելավելու կենդանիների, կենդանիների և մարդկանց համար ընդհանուր հիվանդությունների վերահսկման և տարածման կանխարգելման, ինչպես նաև կենդանական ծագման սննդամթերքի անվտանգության մակարդակը:

20. Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

- 1) ԽԵԿ-ի համարակալման արդյունավետ մեթոդի առաջադրում.
- 2) ԽԵԿ-ի համարակալման գործընթացի կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ պարագաների նվազագույն քանակի սահմանում.
- 3) տվյալների թվայնացման մատչելիության ապահովում.
- 4) ծրագրի իրականացման հնարավոր ռիսկերի գնահատում և դրանց մեղմանն ուղղված միջոցառումների մշակում:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

21. Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկատվության բացասական ազդեցությունը պարենային ապահովության (հիվանդությունների դեմ պայքար, կենդանական ծագման արտադրանքի ծավալների կանխատեսումներ և այլն) և սննդամթերքի անվտանգության վրա հրատապ է դարձնում նախաձեռնել աշխատանքներ ԽԵԿ-ի, իսկ հաջորդիվ՝ մանր եղջերավոր կենդանիների համարակալման, հաշվառման և շահագրգիռ բոլոր կողմերի համար հասանելի էլեկտրոնային տեղեկատվական հարթակի ստեղծման ուղղությամբ:

22. Ծրագիրը նախատեսում է Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացնել հանրապետությունում առկա ԽԵԿ-ի համարակալում, հաշվառում, տեղեկատվական էլեկտրոնային բազայի ստեղծում և տվյալների պահպանում, որի մեկնարկը տրվելու է 2020 թվականին և պայմանավորված տավարաբուծության վարման տեխնոլոգիական գործընթացներով և տեխնիկատնտեսական պատճառներով՝ այն կրելու է շարունակական բնույթ: Մեկնարկային տարում կհամարակալվի և կհաշվառվի Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում առկա շուրջ 800 հազար գլուխ ԽԵԿ-ի ամբողջ սեռահասակային կազմը, իսկ հաջորդ տարիներին՝ շուրջ 245 հազար գլուխ՝ տարեկան:

23. Համակարգի գործարկման և հետագա բնականոն ընթացքի ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը (Աղյուսակ 3):

**Համակարգի գործարկումը և շարունակականությունն ապահովող քայլերի
հաջորդականությունը**


Հ/հ	Քայլը	Նկարագիրը	Իրականացնող մարմինը	Ժամկետները
1.	Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման, ԽՆԿ-ի համարակալման և հաշվառման վերաբերյալ աշխատանքային ու միջնաժամկետ ծախսային ծրագրերի մշակում	ըստ հանրապետության մարզերի նախատեսված աշխատանքների և ժամանակացույցի պլանավորում, ըստ ծանրաբեռնվածության աշխատանքային խմբերի (դրանցում ընդգրկված ծառայություն մատուցող անձանց) քանակի հաշվարկում, բյուջեի հաշվարկում, միջոցառումների քանակական և որական ցուցանիշների սահմանում	Նախարարություն ՊՈԱԿ	2020-2022 թվականներ
2.	Համակարգում ներգրավված անձնակազմի վերապատրաստում	գյուղատնտեսական կենդանիների համարակալման, տվյալների թվայնացման և համակարգչային ծրագրի կիրառման մատչելիության ապահովման և հմտությունների բարձրացման նպատակով վերապատրաստումների ու դասընթացների կազմակերպում	Նախարարություն ՀՀ ՍԱՏՄ ՊՈԱԿ Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) Հիմնադրամներ (համաձայնությամբ)	2020-2022 թվականներ
3.	Հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացում	տավարարությունը գրառվող, ինչպես նաև կենդանական ծագման արտադրության արժեչոթայում ներգրավված տնտեսավարողներին ԽՆԿ-ի համարակալման և հաշվառման կարևորության վերաբերյալ խորհրդատվության տրամադրում, հանրային լայն շրջանակների իազեկման նպատակով տեսահոլովակների, տեղեկատվական թոուցիկների, պաստառների պատրաստում	Նախարարություն ՀՀ ՍԱՏՄ ՊՈԱԿ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) Հիմնադրամներ (համաձայնությամբ)	2020-2022 թվականներ

4.	Ականջապիտակների, հատուկ դակիչների և մատյանների (այսուհետ՝ պարագաներ) ձեռքբերում	տեխնիկական բնութագրերի մշակում, սահմանված կարգով մրցույթի անցկացում	Նախարարություն	2020 թվականի II կիսամյակ, հաջորդիվ յուրաքանչյուր տարվա I եռամսյակ
5.	Միջոցառումներ իրականացնող մարզային աշխատանքային խմբերի (այսուհետ՝ խմբեր) ձևավորում	միջոցառումներ իրականացնող անձանց (խմբերին) ներկայացվող նվազագույն պահանջների սահմանում, մրցույթի անցկացում, խմբերի հետ քաղաքացիա-իրավական պայմանագրերի կնքում	ՊՈԱԿ	2020 թվականի II կիսամյակ
6.	Պարագաների բաշխում	անասնաբուժական և համարակալման միջոցառումներ իրականացնող խմբերին պարագաների տրամադրում	ՊՈԱԿ	2020 թվականի II կիսամյակ, հաջորդիվ շուրջ տարի
7.	Բուն համարակալում	հանրապետության ողջ տարածքով ԽԵԿ-ի ականջներին (աջ և ձախ) ականջապիտակների ամրացում	ՊՈԱԿ	2020 թվականի II կիսամյակ, հաջորդիվ շուրջ տարի
8.	Համարակալված ԽԵԿ-ի հաշվառում	անասնատերերի և ԽԵԿ-ի վերաբերյալ գրանցամատյանների վարում, տվյալների թվայնացման միջոցով «ԱՆԻ ՊԱՍ» մուտքագրում	ՊՈԱԿ	2020 թվականի II կիսամյակ, հաջորդիվ շուրջ տարի
9.	Հաշվետվությունների պատրաստում և ներկայացում	իրականացված աշխատանքների ֆինանսական և ոչ ֆինանսական տվյալների ամփոփում, սահմանված ձևին համապատասխան հաշվետվությունների ներկայացում	ՊՈԱԿ	2020 թվականի II կիսամյակ, հաջորդիվ շուրջ տարի (ամսական և (կամ) եռամսյակային պարբերականությամբ)
10.	«ԱՆԻ ՊԱՍ» սպասարկում	Էլեկտրոնային տեղեկատվական բազայի (սերվերի) տեխնիկական և ծրագրային անխափան աշխատանքի սպահովում	Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին (այսուհետ՝ ՀՀ ՍԱՏՄ)	Ծրագրի իրականացման ողջ ընթացքում

11.	ԽԵԿ-ի համարակալման գործընթացի վերահսկողություն	չհամարակալված ԽԵԿ-ի կամ չգրանցված (ապօրինի) ականջապիտակների օգտագործման հայտնաբերում, չհամարակալված կենդանի ԽԵԿ-ի և (կամ) որպես միս իրացման սահմանափակում	ՀՀ ՄԱՏՄ	Ծրագրի իրականացման ողջ ընթացքում
12.	Համակարգի մոնիթորինգ	ԽԵԿ-ի համարակալման աշխատանքների որակի և ժամկետների վերահսկում, խնդիրների և բացթողումների բացահայտման և շտկման նպատակով խմբերի կողմից իրականացվող համարակալման և տվյալների մուտքագրման աշխատանքների ուսումնասիրում, ձեռք բերված պարագաների որակի ուսումնասիրում, տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողների շրջանում, ինչպես նաև շահագրգիռ ու փոխկապակցված ոլորտներում (անասնաշուկաներ, սպանդանոցներ և այլն) հարցումների իրականացում	Նախարարություն ՊՈԱԿ ՀՀ ՄԱՏՄ Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) Հիմնադրամներ (համաձայնությամբ)	Ծրագրի իրականացման ողջ ընթացքում

24. ԽԵԿ-ի համարակալման դաշտային աշխատանքների կազմակերպման, դրանց հաշվառման և տվյալների թվայնացման աշխատանքները համակարգվելու և իրականացվելու են վերակազմակերպված ՊՈԱԿ-ի, իսկ ԽԵԿ-ի համարակալման գործընթացի վերահսկումը, «ԱՆԻ ՊԱՍ» համակարգի սպասարկումը և մուտքագրված տվյալների պահպանումը՝ ՀՀ ՄԱՏՄ-ի կողմից:

25. Հաշվի առնելով, որ հանրապետությունում հակաանասնահամաճարակային կայուն վիճակի ապահովման նպատակով ամեն տարի իրականացվող պատվաստման ծրագրում ընդգրկված է հանրապետությունում հաշվառված (ՀՀ ՎԿ) ամբողջ անասնա-գլխաքանակը, ապա հնարավոր է, որ անասնաբուժական և ԽԵԿ-ի համարակալման ծառայությունները մատուցվեն ֆիզիկական կամ իրավաբանական կարգավիճակ ունեցող միևնույն աշխատանքային խմբի(երի) կողմից (այսուհետ՝ խումբ) (Նկար 1):



Նկար 1. «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքը

26. Վերագրյալ երկու միջոցառումների կենտրոնացումը մեկ ՊՈԱԿ-ի ներքո հնարավորություն կընձեռի մի կողմից ԽԵԿ-ի համարակալման գործընթացի անընդհատության (ծին, անհատական համարի փոխարինում (կորուստ, անընթեռնելիություն) ապահովման, իսկ մյուս կողմից՝ ԽԵԿ-ի գլխաքանակի, տեղաբաշխվածության և շարժի վերաբերյալ ստույգ տեղեկատվության հիման վրա առավել արդյունավետ և ճշգրիտ իրականացնել պատվաստման ծրագրով նախատեսված կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումների պլանավորումն ու անցկացումը:

27. ԽԵԿ-ի համարակալման և հաշվառման գործընթացի պլանավորումն ու ըստ ծանրաբեռնվածության դաշտային աշխատանքների համար անհրաժեշտ խմբերի (դրանցում ընգրկված անձանց) քանակի սահմանում իրականացվելու է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի 1315-Ն որոշմամբ և (կամ) ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով հաստատված ԽԵԿ-ի համարակալմանը ներկայացվող պահանջները, ՀՀ ՎԿ-ի կողմից մարզերի կտրվածքով հաշվառված ԽԵԿ-ի գլխաքանակը (2020-2021 թվականներ), պատվաստման ծրագրով նախատեսված կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումների ծավալները, տարածաշրջանների, համայնքների քանակը, հեռավորությունը և այլն (Աղյուսակ 4):

Հայաստանի Հանրապետության մարզերի հողային մակերեսը, վարչական շրջանների տարածքները և 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվառված ԽԵԿ-ի գլխաքանակը

(«Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՎԿ, Կադաստրի կոմիտե)

ՀՀ մարզը	Վարչատարածքային միավորների քանակը (հատ)		Մակերեսը (կմ ²)		ԽԵԿ (գլուխ)	
	տարածաշրջան	համայնք	ընդհանուր հողային	այդ թվում՝ արոտ	ընդամենը	այդ թվում՝ կով
ք. Երևան	1		223	-	3 569	829
Արագածոտն	4	72	2 753	1 311.8	68 215	31 270
Արարատ	3	95	2 090	779.7	40 116	13 275
Արմավիր	3	97	1 242	215.18	54 255	16 346
Գեղարքունիք	5	57	5 348	1 818	97 071	45 268
Լոռի	5	56	3 799	1 456.3	72 795	34 755
Կոտայք	3	42	2 086	794.2	52 119	24 037
Շիրակ	5	42	2 680	1 120.7	87 095	40 986
Սյունիք	4	8	4 506	1 455.6	52 147	22 753
Վայոց ձոր	2	8	2 308	922.6	19 699	8 112
Տավուշ	3	24	2 704	630.2	32 175	14 085
Ընդամենը՝	37	502	29 743	10 504	579 256	251 6

28. Հարկ է նշել, որ 2019 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում պատվաստման ծրագրում ընգրկված 12 հիվանդությունների նկատմամբ շուրջ 6.23 մլն հատ (փաստացի) կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներն իրականացվել են 545 անասնաբույժների (մասնագետների) կողմից: Ընդ որում՝ շատ դեպքերում նշված ծրագրի շրջանակներում քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայություն մատուցող անասնաբույժները նաև տվյալ համայնքը(ները) սպասարկող անասնաբույժներ են: Ուստի համապետական անասնաբուժական և ԽԵԿ-ի համարակալման համալիր միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ խմբերի ձևավորման մրցույթին (ՊՈԱԿ) կարող են մասնակցել նաև համայնքը սպասարկող անասնաբույժները ևս:

29. ԽԵԿ-ի համարակալման և հաշվառման առավել բարդ և կարևոր ժամանակաշրջան է ծրագրի մեկնարկային տարին, քանի որ այդ ընթացքում նախանշված կազմակերպարավական և տեխնիկական նախապատրաստական աշխատանքների իրականացման արդյունավետությամբ է պայմանավորված համակարգի ներդրման և հետագայում դրա անխափան շահագործման հաջող ընթացքը:

30. Մեկնարկային տարում ծրագրով նախանշված լայնածավալ աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է նախարարության, ՊՈԱԿ-ի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ ՍԱՏՄ-ի, հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների, ինչպես նաև այլ շահագրգիռ մարմինների սերտ համագործակցությունը:

31. Ծրագրի մեկնարկային տարվա համար անհրաժեշտ ականջապիտակների քանակը շուրջ 38 տոկոսով գերազանցում է հանրապետությունում հաշվառված ԽԵԿ-ի գլխաքանակը: Հաշվարկի համար հիմք են հանդիսացել հանրապետությունում տավարարուծության վարման տեխնոլոգիական, ԽԵԿ-ի ընդհանուր և առանձին կովերի գլխաքանակի, կովերի պտղատվության (85 տոկոս), նախրի շրջանառու գլխաքանակի շարժի (ծին, խոտան, իրացում մսի և այլն), հնարավոր թաքնված գլխաքանակի առկայության և կրկնակի համարակալումների (ականջապիտակի կորուստ, փոխարինում) վերաբերյալ վերլուծությունները: Այսպիսով, 2020 թվականին Հայաստանի Հանրապետության մարզերում և տարածաշրջաններում շուրջ 800 հազար գլուխ ԽԵԿ-ի համատարած համարակալման համար անհրաժեշտ է ձեռք բերել ընդհանուր առմամբ 1.6 մլն հատ ականջապիտակ (մեկ գլուխ ԽԵԿ-ի հաշվով երկու ականջապիտակ) (Աղյուսակ 5):

**ԽԵԿ-ի անհատական ականջապիտակների քանակն ըստ
Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի**


Ը/հ	ՀՀ մարզը	ԽԵԿ-ի գլխաքանակը, գլուխ (01.01.2020 դրությամբ)	Պահանջվող ականջապիտակների քանակը (հատ)
1.	ք. Երևան	3 569	9 858
2.	Արագածոտն	68 215	18 8421
3.	Արարատ	40 116	110 807
4.	Արմավիր	54 255	149 861
5.	Գեղարքունիք	97 071	268 126
6.	Լոռի	72 795	201 072
7.	Կոտայք	52 119	143 961
8.	Շիրակ	87 095	240 571
9.	Սյունիք	52 147	144 039
10.	Վայոց ձոր	19 699	54 412
11.	Տավուշ	32 175	88 873
<i>Ընդամենը՝</i>		579 256	1 600 000*

* Մեկ կենդանու հաշվով երկու ականջապիտակ

32. Ծրագրին տավարաբուծությամբ զբաղվող և տավարաբուծական արտադրանք վերամշակող (սպանդանոցներ) տնտեսավարողների, անասնաշուկաների մասնակցության ակտիվացման, ինչպես նաև հնարավոր խոչընդոտների վերացման նպատակով՝ 2020 թվականի սկզբից կնախաձեռնվեո իրագեկման լայնածավալ աշխատանքներ, որոնց հիմնական առաքելությունը տավարաբուծական արտադրանքի արտադրության և վերամշակման ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների շրջանում բնակչության կենսանվտանգության և հանրային առողջության ապահովման արժեշղթայում ԽԵԿ-ի համարակալման և հաշվառման համակարգի բացակայության բացասական ազդեցության և դրա կարևորության (հիվանդությունների տարածում, սննդամթերքի անվտանգություն, հետազոտություն) վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացումն է:

33. ԽԵԿ-ի ականջապիտակը կպարունակի տեղեկատվություն կենդանու անհատական համարի (ՀՀ մարզի) վերաբերյալ, մինչդեռ կենդանու մասին ամբողջական

տեղեկատվությունը հնարավոր կլինի ստանալ ականջապիտակների վրա նշված արագ արձագանքման կոդի (այսուհետ՝ QR կոդ) և դրանցից առնվազն մեկի վրա առկա ռադիոհաճախային պիտակի (ռադիոհաճախականության նույնականացման համակարգ (այսուհետ՝ RFID) միջոցով (ընթերցող սարք) (Նկար 2):



** ականջապիտակի վրա մեկ հատը՝ դրա ամրացման հարվածում կամ պիտակի կենտրոնում*

Նկար 2. ԽԵԿ-ի ականջապիտակի վրա նշված տեղեկատվության նշանակությունը

34. Մեկնարկային տարում ողջ ԽԵԿ-ի գլխաքանակը համարակալելու, հաշվառելու և ամբողջական ելակետային տեղեկատվական բազա ստեղծելու նկատառումներից ելնելով՝ գործընթացը կիրականացվի «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, ՀՀ ՍՍՏՄ-ում, ինչպես նաև համայնքը սպասարկող անասնաբույժների (համայնքապետարաններում) մոտ առկա տեղեկատվության հիման վրա: Սակայն հետագայում ԽԵԿ-ի համարակալման և հաշվառման գործընթացը նախաձեռնում են տավարաբուծությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձինք (այսուհետ՝ շահառուներ), որոնք 7 օրվա ընթացքում անասնաբուժական պարտադիր և ԽԵԿ-ի համարակալման ու հաշվառման միջոցառումներ իրականացնող խմբին և (կամ) համայնքը սպասարկող անասնաբույժին կամ համայնքապետարան ներկայացնում են տեղեկատվություն՝ հայտ, իրենց մոտ առկա համարակալման և հաշվառման ենթակա ԽԵԿ-ի առկայության վերաբերյալ (ծնված կենդանի, անընթեռնելի ականջապիտակ կամ կորուստ և այլն): Տավարաբուծությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց մոտ չհամարակալված և չհաշվառված ԽԵԿ-ը չի ընդգրկվի պատվաստման ծրագրի շրջանակներում իրականացվող կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներում, վերջիններիս մասով չեն տրամադրվի

2010 թվականի հոկտեմբերի 21-ի Հայաստանի Հանրապետության կառավարության 1499 թվակիր որոշմամբ սահմանված անասնաբուժական համապատասխան ձևաթղթերը (վկայականներ, սերտիֆիկատներ), իսկ տնտեսավարողները հնարավորություն չեն ունենա օգտվելու գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերից:

35. Հայտը ստանալուց և համապատասխան գրանցամատյանում ամրագրելուց (անասնատիրոջ տվյալները, ԽԵԿ-ի քանակը, սեռը և այլն) հետո 15 օրվա ընթացքում խմբի կողմից իրականացվում է այցելություն տվյալ համայնք ԽԵԿ-ի համարակալման և մատյանում ամրացված անհատական համարի հաշվառման նպատակով: Հարկ է նշել, որ ԽԵԿ-ին անհատական համար ամրագրվում է մեկ անգամ և ամբողջ կյանքի համար, սակայն անհատական համարները ենթակա են փոխարինման միայն դրանց բացակայության (մեկ և (կամ) երկու ականջապիտակն էլ չկան), դրանց անընթեռնելի լինելու և պատահական կրկնողությունների դեպքում:

36. Նախապես տպագրված միևնույն նույնականացման անհատական համարով, QR կոդով և RFID-ով ականջապիտակներն ամրացվում են ԽԵԿ-ի ականջներին՝ յուրաքանչյուրին մեկ ականջապիտակ: Ընդ որում, համարակալված և հաշվառված ԽԵԿ-ի մշտադիտարկման աշխատանքները ժամանակագրական տեսանկյունից առավել արդյունավետ իրականացնելու նպատակով, ռադիոհաճախային պիտակ պարունակող ականջապիտակը կամրացվի կենդանու աջ ականջին:

37. Համարակալման ենթակա ԽԵԿ-ի առկայության վերաբերյալ հայտը ստանալուց, սահմանված ժամկետներում կենդանու վրա անհատական համարով ականջապիտակն ամրացնելուց հետո խումբը (անդամը) 7 օրվա ընթացքում համապատասխան թվային տեխնիկայի միջոցով «ԱՆԻ ՊԱՍ» է մուտքագրում.

ա. շահառուի տվյալները (անուն, ազգանուն, անձնագրի սերիա, համար, հասցե, կոնտակտային տվյալներ),

բ. ԽԵԿ-ի հաշվառման վայրը (մարզ, համայնք, հասցե),

գ. ամրագրված անհատական համարը (ականջապիտակի համար) **և մականունը,**

դ. համարակալման ամսաթիվը,

ե. ԽԵԿ-ի սեռահասակը (սեռ, ծննդյան ամսաթիվը, հորթ, երինջ, կով),

զ. ԽԵԿ-ի ցեղը (ցեղայնությունը) (մաքրացեղ, խառնացեղ, տոհմային) **և արտակազմվածքի նկարագիրը** (գույն, այլ տարերակիչ նշաններ), **ծնի ամսաթիվը** (երինջ, կով),

է. անասնաբուժական պարտադիր միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն (պատվաստված և (կամ) ախտորոշված է որևէ հիվանդության նկատմամբ, անաթիվը):


38. Միաժամանակ թվային համապատասխան տեխնիկայի բացակայության կամ տարբեր տեխնիկական խնդիրների դեպքում խումբը, համարակալված ԽԵԿ-ի վերաբերյալ տվյալները սահմանված ժամկետում համակարգ մուտքագրելու նպատակով, ՊՈԱԿ է ներկայացնում գրանցամատյանից քաղվածք:

39. Ելնելով ծրագրի իրականացման մեկնարկային տարվա ծանրաբեռնվածությունից և ԽԵԿ-ի հաշվառման աշխատանքների կազմակերպման օպերատիվությունից՝ համակարգ կնուտքագրվի միայն վերոգրյալ տեղեկատվությունը: Սակայն հաշվի առնելով «ԱՆԻ ՊԱՍ»-ի ծրագրային ապահովման հնարավորությունները՝ հետագայում պահանջվող տեղեկատվության շրջանակները կընդլայնվեն՝ ներառելով տվյալներ համարակալված և հաշվառված ԽԵԿ-ի նախնիների, մթերատվության, տարվող տոհմային աշխատանքների, արոտատեղի վերաբերյալ և այլն:

40. ԽԵԿ համարակալման և հաշվառման գործընթացի կարևոր բաղադրիչն է համակարգից հաշվառված կենդանու դուրս բերումը, որը հիմնականում իրականացվում է կենդանու արտահանման, սպանդի (իրացում մսի, հարկադիր սպանդ) կամ անկման դեպքերում (Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 1315-Ն որոշմամբ): **Նշված դեպքի վերաբերյալ շահառուն անհապաղ տեղեկատվություն է ներկայացնում** խմբին և (կամ) համայնքը սպասարկող անասնաբույժին և 7 օրվա ընթացքում հանձնում կենդանու ականջապիտակը: Սպանդանոցային մորթի դեպքում վերը նշված տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև ականջապիտակների հանձնումն իրականացնում է սպանդանոցը: Հաշվառումից հանված ԽԵԿ-ի ականջապիտակները ՊՈԱԿ-ի կողմից կակտավորվեն և կոչնչացվեն:

41. Ծրագրի ամբողջ ընթացքի, մասնավորապես՝ մրցութային կարգով ձեռք բերված պարագաների մարզային աշխատանքային խմբերին բաշխման, ըստ պլան-ժամանակացույցի աշխատանքների կազմակերպման, հանրապետության ԽԵԿ-ի ամբողջ անասնազվիսաքանակի ծրագրում ներգրավման, խմբերի կողմից դաշտային աշխատանքների իրականացման, ժամկետների պահպանման, անհատական համարների ամրագրման, համարակալված կենդանիների հաշվառման և էլեկտրոնային տեղեկատվական բազա տվյալների (այդ թվում՝ սպանդանոցների կողմից) մուտքագրման

ճշգրտության և ժամկետների պահպանման, հաշվառումից հանված ակնհայտակներին ոչնչացման, սերվերի սպասարկման, ինչպես նաև ժամանակին հաշվետվությունների ներկայացման նկատմամբ հսկողություն և վերահսկողություն կիրականացնեն նախարարությունը, ՊՈԱԿԸ և ՀՀ ՄԱՏՄ-ն (իրենց լիազորությունների շրջանակներում):



Նկար 3. Էլեկտրոնային տեղեկատվական հարթակ

42. Հարկ է նշել, որ համակարգ տվյալների մուտքագրման իրավասություն է ունենալու ՊՈԱԿ-ը (այդ թվում՝ խմբեր) և ՀՀ ՄԱՏՄ-ն (այդ թվում՝ «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն), ինչպես նաև սպանդանոցները՝ սահմանված արտոնությունների շրջանակներում: Սակայն համակարգը որպես տեղեկատվական հարթակ հասանելի կլինի նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ ՄԱՏՄ-ի, ՀՀ ՎԿ-ի, ՊՈԱԿ-ի, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (համայնքապետարաններ), համայնքը սպասարկող անասնաբույժների, սպանդանոցների և ոլորտային հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների համար (Նկար 3):

V. ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

43. Ծրագրի մոնիթորինգն իրականացնում են նախարարությունը, ՊՈԱԿ-ը, ՀՀ ՄԱՏՄ-ն, ինչպես նաև ոլորտային հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները: Մոնիթորինգի մեխանիզմներ անհրաժեշտ են բոլոր բաղադրիչների համար (պարագաների բաշխում, ծառայությունների մատուցում, համարակալման և հաշվառման ստանդարտ գործողությունների իրականացում, թաքնված գլխաքանակի շարժ և (կամ) համակարգում չհաշվառված կենդանիների իրացում), ինչը թույլ կտա գնահատել ԽԵԿ-ի համարակալման և հաշվառման համակարգի համապատասխանությունը ծրագրով սահմանված գործողությունների ընթացակարգին:

44. Մոնիթորինգը պետք է ընդգրկի հանրապետության ողջ տարածքը: Մոնիթորինգի օբյեկտները՝ վարչատարածքային միավորները, աշխատանքային խմբերը, տավարաբուծությամբ զբաղվող տնտեսությունները, սպանդանոցները և այլն ընտրվելու են պատահականության սկզբունքով: Մոնիթորինգի հիմնական նպատակն է՝ համակարգում չհաշվառված ԽԵԿ-ի, չհաշվառված նույնականացման համարով ԽԵԿ-ի առկայության, ինչպես նաև շահառուների և ԽԵԿ-ի նույնականացման տվյալների անհամապատասխանությունների հայտանաբերումը, նույնականացման համարների կրկնողության բացառումը, մինչև նույն վարչատարածքում (շահառու, տնտեսություն) ԽԵԿ-ի ականջապիտակների պարբերաբար կորուստների պատճառների, ինչպես նաև ԽԵԿ-ի մուտքերի (ծին, ներկրում) և ելքերի (սպանդ, անկումներ, արտահանում) համակարգ մուտքագրման ժամկետների ուսումնասիրումը, ծրագրի իրականացմանը խոչընդոտող խնդիրների բացահայտումը և այլն:

45. Համակարգում հաշվառված շահառուների և ԽԵԿ-ի անհատական տվյալների համապատասխանությունը ստուգելու, կենդանիների տեղաշարժը վերահսկելու և առհասարակ ծրագրի տարբեր փուլերում հնարավորինս արագ և մինչև նույն ժամանակ առավել ամփոփ տեղեկատվություն հավաքագրելու նպատակով կօգտագործվեն (ՊՈԱԿ-ի, ՀՀ ՄԱՏՄ) QR կոդ կարդացող սարքավորումներ («խելացի» հեռախոսներ, սկաներներ): Մոնիթորինգային առավել լայնածավալ աշխատանքները կիրականացվեն նաև նախապես մշակված հարցաթերթիկների, մարզային այցելությունների, հարցումների միջոցով:

46. ՊՈԱԿ-ը ծրագրի շրջանակներում պատվիրակված ծառայությունների իրականացման վերաբերյալ ամեն ամիս նախարարություն է ներկայացնում ըստ մարզերի գրանցամատյաններում հաշվառված շահառուների, ԽԵԿ-ի գլխաքանակի, այդ հաշվով

բաշխված նույնականացման համարով ականջապիտակների, մատուցված ծառայությունների և հաշվառումից հանված ականջապիտակների ակտավորման և ոչնչացման վերաբերյալ հաշվետվություն:

VI. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

47. Ծրագրի իրականացման հիմնական ռիսկերն են՝

- 1) մեկնարկային տարում նախանշած ծավալների թերակատարումը.
- 2) շահառուների կողմից ԽԵԿ-ի համարակալման գործընթացի իրականացման խոչընդոտների ստեղծումը.
- 3) նոր ծնված և համարակալման ենթակա, ինչպես նաև նախրից դուրս բերված ԽԵԿ-ի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և ականջապիտակները խմբերին հանձնման ուշացումները.
- 4) անձնակազմի կողմից ԽԵԿ-ի համարակալման և հաշվառման տվյալների՝ համակարգ մուտքագրման տեխնիկական խնդիրները.
- 5) սերվերի ծրագրային ապահովման խափանումները.
- 6) ծրագրի հարատևության ապահովման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունը.
- 7) համապետական սպանդանոցային մորթի անցման ճախողումը:

48. Ծրագրի ռիսկերի մեղմանն ուղղված միջոցառումները՝

- 1) տարբեր գերատեսչությունների փոխհամաձայնեցված և համատեղ աշխատանքների իրականացում, ըստ ծանրաբեռնվածության աշխատանքային խմբերի անհրաժեշտ քանակի սահմանում.
- 2) տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողների շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացում.
- 3) ՀՀ ՍԱՏՄ-ի կողմից վերահսկողության ուժեղացում.
- 4) անձնակազմի վերապատրաստման դասընթացների անցկացում, համակարգչային ծրագրից օգտվելու ձեռնարկների պատրաստում.
- 5) համապատասխան ենթակառուցվածքների և մասնագիտական հաստիքների ստեղծում (ՊՈԱԿ, ՀՀ ՍԱՏՄ).
- 6) ամեն տարի Հայաստանի Հանրապետության կառավարություն «Միջնաժամկետ ծախսային ծրագրերի» ներկայացում, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրների (միջազգային դոնոր կազմակերպություններ և այլն) ներգրավում:

VII. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻԶԸ

49. Ծրագիրը ֆինանսավորումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

50. Ծրագրի ընդհանուր բյուջեն 2020-2023 թվականների համար կազմում է շուրջ 1.44 մլրդ դրամ: 2020 թվականին ծրագրի մեկնարկի համար կպահանջվի շուրջ 750 մլն դրամ (ներառյալ հարկերը):

51. Կանխատեսվող ծախսերի ֆինանսական գնահատման համար ծրագրի շրջանակներում ձեռք բերվող մեկ ականջապիտակի հաշվարկային արժեք է ընդունվել շուրջ 315 դրամը, դակիչինը՝ 8000 դրամը, գրանցամատյանին՝ 3000 դրամը: Միաժամանակ մեկ գլուխ ԽԵԿ-ի համարակալման և հաշվառման ծառայության ծախս է ընդունվել 300 դրամը (Աղյուսակ 6):

52. Հարկ է նշել, որ ծրագրի բյուջեում անհրաժեշտ թվային տեխնիկայի (համակարգիչներ, տպիչներ) գնման ֆինանսական միջոցներ ներառված չեն, քանի որ դրանք որպես հիմնական միջոց նախատեսվում է ձեռք բերել ՊՈԱԿ-ի պահպանման ծախսերի հաշվին:

Հայաստանի Հանրապետությունում 2020-2023 թվականներին ԽԵԿ համարակալման և հաշվառման ծրագրի ֆինանսական հաշվարկ

Հ/հ	Անվանա- ցանկը	Տարին												Ընդամենը 2020-2023 թվականներ 1(000 դրամ)
		2020			2021			2022			2023			
		Չափի միավորը (հատ)	Միավորի արժեքը (դրամ)	Ընդամենը (1000 դրամ)	Չափի միավորը (հատ)	Միավորի արժեքը (դրամ)	Ընդամեն (1000 դրամ)	Չափի միավորը (հատ)	Միավորի արժեքը (դրամ)	Ընդամենը (1000 դրամ)	Չափի միավորը (հատ)	Միավորի արժեքը (դրամ)	Ընդամենը 1000 (դրամ)	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	16
1.	Ականջա- պիտակ	1,600,000	315.3	504,480	493,000	315.3	155,443	493,000	315.3	155,443	493,000	315.3	155,443	971
2.	Դակիչ	500	8,000	4,000	55	8,000	440	55	8,000	440	55	8,000	440	5
3.	Գրանցա- մատյան	500	3,000	1,500	55	3,000	165	55	3,000	165	55	3,000	165	2
4.	Ծառայու- թյունների մատուցում	800,000	300	240,020	246,500	300	73,950	246,500	300	73,950	246,500	300	73,950	462
5.	Համարա- կալված և հաշվառ- ված ԽԵԿ	800,000	-	-	246,500	-	-	246,500	-	-	246,500	-	-	-
Ընդամենը՝		800,000*	-	750,000	246,500*	-	229,998	246,500*	-	229,998	246,500*	-	229,998	1,439,974*

*Համարակալված և հաշվառված ԽԵԿ

V. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

53. 2020-2023 թվականների ընթացքում պետական պատվերի հաշվին կհամարակալվի և կհաշվառվի հանրապետությունում առկա ավելի քան 1.5 մլն գլուխ ԽԵԿ, այդ թվում՝ մեկնարկային տարում 800 հազար գլուխ, իսկ հաջորդիվ շուրջ 245 հազար գլուխ՝ տարեկան:

54. Ծրագրի իրականացման արդյունքում՝

- 1) ԽԵԿ-ի համարակալման և հաշվառման ինստիտուտի կայացում.
- 2) նախիրներում ըստ սեռահասակային կազմի ԽԵԿ-ի գլխաքանակի վերաբերյալ ստույգ տեղեկատվական բազայի առկայություն.
- 3) հանրապետության ամբողջ տարածքով ԽԵԿ-ի տեղաշարժի վերահսկում և հետազոտության բարելավում.
- 4) կայուն հակաանասնահամաճարակային իրավիճակի ապահովում.
- 5) սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացում, հետազոտության ապահովում.
- 6) հանրային առողջության մակարդակի բարձրացում.
- 7) նախրի կառավարում, տոհմասելեկցիոն լայնածավալ աշխատանքների կազմակերպման համար նախադրյալների ստեղծում.
- 8) կենդանական ծագման արտադրանքի արտադրության ծավալների կանխատեսումների ճգրտության բարձրացում.
- 9) գյուղատնտեսական այլ կենդանիների համար ռեգիստրի նախադեպի ստեղծում.
- 10) հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների ապահովագրության ինստիտուտի կայացման նախադրյալների ստեղծում.
- 11) միջազգային չափանիշներին համապատասխան՝ համարակալված և հաշվառված ԽԵԿ:

55. Հանրապետությունում էլեկտրոնային տեղեկատվական հարթակի միջոցով ԽԵԿ-ի շարժի և տեղաբաշխվածության վերաբերյալ ստացված տեղեկատվությունը հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ կազմակերպելու առկա արտադարյալների և խոտհարքների շահագործման կառավարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ